ՀՀ ք. Երևան, 0015, Արգիշտի փող., 7/4 շ., բն. 35
Հեռ.՝ (+374 93) 999 390, (+374 55) 099 013
Էլ. փոստ՝ info@menq.org
www.menqproduction.com

«Հաստատում եմ», մրցաշարի կազմակերպիչ՝
«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերություն
հիմնադիր և տնօրեն Պավել Սարգսյան_____Կ.Տ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բիզնես ոլորտի, տեղեկատվական ընկերությունների, հեռահաղորդակցության և ֆինանսաբանկային կազմակերպությունների միջև սեղանի թենիսի ՖԲՍԹ-ի 6-րդ սիրողական առաջնություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն Կանոնադրությամբ սահմանվում են բիզնես ոլորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության և ֆինանսաբանկային կազմակերպությունների միջև սեղանի թենիսի ՖԲՍԹ-ի սիրողական առաջնության անցկացման կանոնները և պայմանները:

1.2 Սույն Կանոնադրությունը և դրա փոփոխությունները հաստատվում են առաջնության կազմկոմիտեի (այսուհետև՝ Կազմկոմիտե) որոշումով՝ քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

1.3 Կազմկոմիտեի կազմում ընդգրկվում են՝ մրցաշարի կազմակերպիչը, թիմերի ղեկավարները և մրցաշարի Գլխավոր մրցավարը: Կազմկոմիտեի նախագահողն է մրցաշարի կազմակերպիչը:

1.4 Կազմկոմիտեն իրավասու է քննարկել և որոշում ընդունել մրցաշարի հետ կապված կազմակերպչական և խաղային հարցերի վերաբերյալ: Կազմկոմիտեի որոշումները ընդունվում են մասնակիցների քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Այն դեպքում, եթե ձայները կիսվում են հավասար, որոշիչ ձայն ունի Կազմկոմիտեի նախագահողը:

2. Առաջնության մասնակիցները

2.1. ՖԲՍԹ սիրողական առաջնությանը մասնակցում են բացառապես բիզնես ոլորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության և ֆինանսաբանկային կազմակերպությունների ներկայացուցիչները:

2.2. Մրցաշարին կարող են մասնակցել 18-60 տարեկան **արական և իգական** սեռի ներկայացուցիչներ:

2.3. Առաջնությանը կարող են մասնակցել բացառապես բիզնես, տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության և ֆինանսաբանկային ոլորտի կազմակերպությունների (այսուհետև՝ **կազմակերպություն**)՝ մինչև **17.09.2019թ.** աշխատանքի ընդունված հաստիքային աշխատակիցները (Կազմկոմիտեի որոշմամբ առաջնությանը կարող են մասնակցել նաև տվյալ **կազմակերպության** հոլդինգի աշխատակիցները): Տվյալ պայմանները հաստատվում են **կազմակերպության** կողմից ներկայացված «Մասնակցության հայտի» և մասնակիցների աշխատանքային գրքույկների, աշխատանքի ընդունելու հրամանի և անձնագրի պատճենների հիման վրա: «Մասնակցության հայտ»-երը ներկայացվում են մրցաշարի

կազմկոմիտե ոչ ուշ քան մրցաշարի վիճակահանության օրվանից, **2 օր առաջ /այսինքն՝ 15.11.2019թ-ը ներառյալ/**: Ներկայացված հայտերի ճշտությունը ստուգվում է մասնակիցների կողմից: Առաջնությանը չեն կարող մասնակցել պրոֆեսիոնալ խաղացողներ, որոնք վերջին մեկ ու կես տարվա ընթացքում մասնակցել են որևիցե բարձրագույն խմբի կամ պրոֆեսիոնալ մրցաշարի:

2.4. Այն դեպքում, եթե մրցաշարի որևէ խաղի ընթացքում խախտվել են 2.3 կետի պահանջները որևէ մասնակցի կողմից՝ խաղերին մասնակցել է չհայտավորված կամ պահանջներին չբավարարող խաղացող, ապա տվյալ մասնակցին գրանցվում է պարտություն 0:3 հաշվով և հեռացվում է մրցաշարից:

2.5. Յուրաքանչյուր կազմակերպությունից մրցաշարին կարող է մասնակցել առավելագույնը 7 մասնակից: Մրցաշարի ընթացքում արգելվում է մասնակցի փոփոխություն: Յուրաքանչյուր խաղից առաջ մասնակիցները լրացնում են խաղին մասնակցելու հայտերը:

2.6. Մասնակիցները պարտավոր են մասնակցել առաջնությանը սպորտային հագուստով, մարզակոշիկով, մասնակիցները չպետք է **կրեն ճերմակ կամ դեղին գույնի վերնաշապիկ:**

2.7 Ցանկալի է, որ մասնակիցները ներկայանան իրենց **ռակետներով:**

3. Խախտումներ, բողոքարկումներ, տուգանքներ

3.1 Խաղերի հետ կապված մասնակիցների բողոքները քննարկվում են մրցաշարի Կազմկոմիտեի նախագահի և խաղերի գլխավոր մրցավարի կողմից՝ անմիջապես խաղի ընթացքում և կայացված որոշումները բողոքարկման ենթակա չեն:

3.2 Խաղասրահում ոչ սպորտային արարքների դեպքում խաղացողը անմիջապես հեռացվում է խաղասրահից և այլևս չի մասնակցում մրցաշարին: Ոչ սպորտային արարքի որակավորումը տրվում է Կազմկոմիտեի նախագահի և մրցավարների կողմից:

3..3 Մասնակիցների կամ վերջիններիս երկրպագուների կողմից խաղը ընդհատելու և խաղասրահում վեճ, աղմուկ բարձրացնելու դեպքում տվյալ մասնակիցը հեռացվում է մրցաշարից և բոլոր մնացած խաղերի համար նրան գրանցվում է պարտություն 0:3 հաշվով (առանց մուտքավճարի վերադարձմամբ):

4. «Սեղանի թենիս» խաղի ընդհանուր դրույթներ, կանոններ

4.1.Մրցաշարում բոլոր խաղերը անց են կացվում 5 խաղափուլից /սեթից/:

4.2. Խաղը հաղթում է այն մասնակիցը, ով առաջինը կհաղթի 3 խաղափուլ /սեթ/:

4.3 Խաղափուլը հաղթում է, այն խաղացողը, ով առաջինը կհավաքի 11 միավոր:

4.4 Եթե խաղացողները խաղափուլում հավաքում են 10-ական միավոր, ապա այդ դեպքում խաղափուլը շարունակվում է այնքան ժամանակ մինչև խաղացողներից մեկը ունենա 2 միավորի առավելություն:

4.5 Յուրաքանչյուր խաղափուլի ավարտից հետո խաղացողները փոխում են կողմերը:

4.6. Եթե խաղացողները հաղթել են երկուական խաղափուլ, ապա 5-րդ վճռորոշ խաղափուլի ընթացքում խաղացողները փոխում կողմերը այն դեպքում, երբ խաղացողներից մեկ առաջինը կհավաքի 5 միավոր:

4.7. Յուրաքանչյուր խաղափուլից հետո խաղացողներին տրվում է 2 րոպեանոց ընդմիջում

4.8. Խաղափուլը սկսվում է սկզբնահարվածով /подача/:

4.8.Յուրաքանչյուր խաղացող կատարում է 2-ական սկզբնահարված իրար հաջորդականությամբ մինչև խաղափուլի ավարտը:

4.9. Սկզբնահարված առաջինը կատարում է այն խաղացողը, ով վիճակահանությամբ ճիշտ է գուշակում:

4.10. Այն խաղացողը, ով տվյալ խաղափուլում առաջին է կատարում սկզբնահարված, ապա հաջորդ խաղափուլում առաջին է ընդունում մրցակցի սկզբնահարվածը:

4.11. Սկբնահարված կատարելիս խաղացողը գնդակը դնում է բաց ափին, անշարժ այնպես, որ մրցավարը տեսնի, որից հետո գնդակը ուղղահայաց վեր է գցում մոտավորապես 16 սմ և կատարում սկզբնահարված

4.12. Խաղի ընթացքում յուրաքանչյուր խաղացող ունի 1 րոպեանոց ընդմիջում:
4.13. Յուրաքանչյուր խաղացող ընդմիջում կարող է անել խաղի կամ խաղափուլի ցանկացած ժամանակ:
4.14. Խաղացողը ընդմիջման համար նախօրոք զգուշացնում է մրցավարին:

5. Մրցաշարի խաղերը, «Սեղանի թենիս»

5.1. Մրցաշարը Կազմկոմիտեի որոշմամբ սկսվում է մասնակիցների առաջին հանդիպմամբ, որի ժամանակ վիճակահանությամբ որոշվում են մասնակիցների մրցակիցները:
5.2. Մասնակիցներն մրցաշարի ընթաքում հաղթելուց հետո խաղերը շարունակում են ոչ թե նույն, այլ մի այլ՝ 2-3-րդ սեղանի վրա:
5.3. Եթե Մրցավարը խախտում է արձանագրել և տուգանք նշանակել, մասնակիցն իրավունք չունի վեճի մեջ մտնելու մրցավարի հետ, սակայն խաղի ընթացքում, սույն կանոնադրության համաձայն, կարող է բողոքարկել խաղի արդյունքները, կազմկոմիտեի նախագահին և գլխավոր մրցավարին: Բողոքարկման ընթացքը չի կարող տևել ավելի քան 5 րոպե:
5.4. Մասնակիցն իրավունք չունի
5.4.1. Խաղերի ընթացքում ծխել սեղանի մոտ,
5.4.2. Խաղերի ընթացքում օգտագործել ալկոհոլ,
5.4.3. Խաղերի ընթացքում զրուցել հանդիսատեսի հետ,
5.4.4. Խաղերի ընթացքում վիճել մրցավարի կամ մրցակցի հետ,
5.4.5 Խաղերի ընթացքում արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից:

6. Կազմակերպչական դրույթներ

6.1 **Մրցաշարին մասնակցելու նպատակով յուրաքանչյուր մասնակցի համար մրցաշարի կազմակերպչին վճարում են 27.000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը): Այն դեպքում, եթե կազմակերպությունը հայտարարագրում է 2 անձից (2 անձի դեպքում 54,000) ավել մասնակիցներ, ապա կազմակերպությունը վճարում է 62.000 (Վաթսուներկու հազար ՀՀ դրամ ներառյալ հարկերը), մեկ կազմակերպությունից առավելագույն կարող են մասնակցել մինչև 5 (հինգ) մասնակից:** Վճարումները կատարվում են մրցաշարի մեկնարկման օրվանից **2 օր առաջ**: Ժամանակին չվճարած մասնակիցը չի մասնակցում մրցաշարին: Տվյալ վճարները չեն վերադարձվում մասնակցին, եթե խախտվել է 2.3 կետը, վերջինս ներկայացրել է մասնակցության հայտ, վճարել է գումարը, սակայն չի ներկայացել մրցաշարին ոչ կազմակերպչի մեղքով, իսկ մրցաշարը մեկնարկել է:
6.2 Մրցաշարի կազմակերպիչը տվյալ գումարի շրջանակներում պարտավորվում է ապահովել մրցաշարի կազմակերպչական կոորդինացումը, խաղասրահը, խաղերը պատշաճ կերպով կազմակերպելու գույքը, խաղասեղանները, մրցավարներին, մրցաշարի լուսաբանումը ՁԼՄ-ներում, մրցաշարի փակման մրցանակաբաշխությունը:

Մրցաշարի կազմակերպիչ, ծառայությունը մատուցող՝
«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերություն

Կազմակերպության իրավ. անունը	**«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**
Իրավաբանական հասցե	**ք.Երևան, Արգիշտի փ., 7/4 շ., բն. 35**
Հաշվարկային հաշիվ ՀՀ դրամ	**1570021819130100**
Բանկ	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
ՀՎՀՀ	**02634794**
Տնօրեն	**Պավել Սարգսյան**